«ԱՌԱՎՈՏ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ-ԻՆ
(հասցե՝ ՀՀ ք. Երևան, Արշակունյաց պող. 2, 15-րդ հարկ)

Դիմող՝ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
(գրանցման համար՝ 282.110.843221, ՀՎՀՀ՝ 00891777
Ծանուցման հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0010, Արամ Խաչատրյան 20 շենք, բն. 43)

Դիմող՝ Տիգրան Ռոբերտի Նազարյան
(ՆՔՀ՝ 003193562, տրված՝ 07.04.2017թ. 011-ի կողմից, ՀԾՀ՝ 1504700228
Անձնագիր՝ AS0270834, տրված՝ 10.07.2018թ. 011-ի կողմից
Ծանուցման հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0010, Արամ Խաչատրյան 20 շենք, բն. 43)

Դիմողների ներկայացուցիչ՝փաստաբան՝ Ժիրայր Սաֆարյանից
(ID card 010838647, տրված՝ 16.05.2019թ. 003-ի կողմից
Փաստաբանական գործունեության արտոնագիր N 90
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0010, Արամ Խաչատրյան 20 շենք, բն. 43
e-mail zhirayrsafaryan@gmail.com tel. +374 93 11 04 95)

«02» օգոստոսի 2023թ"

ՀԵՐՔՄԱՆ ՊԱՀԱՆՋ

«Առավոտ օրաթերթ» ՍՊԸ-ին պատկանող aravot.am կայքում 14.07.2023 թվականին ժամը 12:16-ին տեղ է գտել հրապարակում հետևյալ վերնագրով. «Յուրացրել են ասֆալտ և բետոն. ահազանգ իրավապահներին» *(https://www.aravot.am/2023/07/14/1355022/)*:

Հրապարակման մեջ տեղ են գտել մի շարք ձևակերպումներ, որոնք ոչ միայն իրականությանը չեն համապատասխանում, այլև կրում են վիրավորական և զրպարտչական բնույթ:

Մասնավորապես նշվել է հետևյալը.

- «ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ 2018-2019թթ.-ին Ջերմուկ համայնքի Կեչուտ բնակավայրի ճանապարհների եւ մայթերի բարեկարգման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում թույլ են տրվել չարաշահումներ»:
- «Իրականացված օպերատիվ ուսումնասիրություններից պարզվել է, որ Կեչուտ բնակավայրի 9-րդ փողոցի 1-ին փակուղի հատվածում նախատեսված հենապատի միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմքի, ինչպես նաեւ բուն հենապատի համար նախագիծ-նախահաշվով նախատեսված 5.189.142 դրամից փաստացի հենապատի համար նախատեսված բետոնի համար ծախսվել է 3.693.995 դրամ»:
- «Բացի սրանից, ասֆալտապատման աշխատանքներն եւս կատարվել են ոչ լիարժեք: Մասնավորապես՝ Կեչուտի 1-ին, 7-րդ, 8-րդ եւ 9-րդ փողոցների, ընդհանուր առմամբ, մոտ 12192քմ մակերեսով միջնահատիկ ասֆալտբետոնի աշխատանքները նախագիծ նախահաշվով նախատեսված 6սմ հաստության փոխարեն իրականացվել են 4սմ հաստությամբ: Ասֆալտապատման համար հատկացված 54.158.139 դրամ գումարից փաստացի ծախսվել է 36.105.426 դրամ, տարբերությունը կազմել է 18.052.713 դրամ»:
- «Արդյունքում՝ «Շինպլյուս» ՍՊԸ տնօրեն Տ. Նազարյանը, հանդիսանալով ՀՀ առեւտրային կազմակերպության անունից փաստաթուղթ կազմելու, տալու կամ դրա իսկությունը հավաստելու համար լիազորված անձ, ՀՀ կառավարության կողմից ստեղծված «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» ոչ առեւտրային